

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Մասնակցային դպրոց» հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ Օտար լեզուներ

Թեմա՝ Բառաքերականական և լեզվական (աուդիո) մեթոդներն ու հնարները գերմաներենի „Massenmedien“, լրատվամիջոցները թեման 10-րդ դասարանում դասավանդելիս:

Կատարող՝ Ռոզա Սարգսյան

ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի Ս. Սարխաչևի անվան միջնակարգ դպրոցի գերմաներենի ուսուցչուհի

Ղեկավար՝ Արաքս Մանուչարյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

3

Բառաքերականական և լեզվական (աուդիո) մեթոդներն ու հնարները գերմաներենի „Massenmedien,, լրատվամիջոցները թեման 10-րդ դասարանում դասավանդելիս:

Գերմաներեն լեզվի բառաքերականական տիպաբանությունը և նրա առանձնահատկությունները 10-րդ դասարանում..... 5

Գերմաներենի լեզվական տիպաբանության առարկան և նրա խնդիրները..... 10

Հնչյունաբանություն..... 12

Ձևաբանություն..... 18

Գոյական..... 19

Ածական..... 20

Բայ..... 21

Գերմաներենի ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները..... 22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....

24

Հավելվածներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գերմաններն լեզվի ուսուցման արդյունավետության կարևորագույն նախադրյալներից մեկը նրա նպատակաուղղվածությունն է, այսինքն՝ օտար լեզուների ուսուցումը որոշակի նպատակների համար:

Մասնագիտական կրթության նպատակների իրագործման համար անհրաժեշտ է պայմաններ ստեղծել, որտեղ հաշվի առնվեն տվյալ առարկայական ոլորտի առանձնահատկությունները:

Ավագ դպրոցի հիմնական մասնագիտական (հումանիտար և բնագիտամաթեմատիկական) հոսքերում Գերմաններն լեզվի ուսուցման նպատակն է.

- նպաստել սովորողների մասնագիտական կողմնորոշմանը,
- օգնել նրանց հետագայում ինքնուրույն և ստեղծագործաբար օգտագործելու ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները,
- հնարավորություն ընձեռել ուսումը շարունակելու մասնագիտական բուհում:

Գերմաններն լեզվի ուսուցումն ավագ դպրոցի մասնագիտական հոսքերում իր ուղղվածությամբ տարբերվում է ընդհանուր հոսքից և զարգացնում է մի շարք խորացված լեզվական-հաղորդակցական կարողություններ:

Լեզվական իրազեկությունը ենթադրում է նոր լեզվական միջոցների իմացություն՝ տվյալ մասնագիտական հոսքի համար ընտրված թեմաներին և հաղորդակցական իրադրություններին համապատասխան, դրանց կիրառում հաղորդակցական նպատակներով, ինչպես նաև հիմնական դպրոցում ստացած լեզվական գիտելիքների (մասնա- վորապես եզրույթների) համակարգում:

Մասնագիտական հոսքում սովորողը պետք է պատկերացում ունենա.

- մայրենի և ուսումնասիրվող գերմաններն լեզուների նմանությունների և տարբերությունների մասին,
- լեզվի հիմնական միավորների մասին (հնչյուն, հնչույթ, բառ, բառակապակցություն, նախադասություն, տեքստ, խոսույթ և այլն),
- բառերի միջև գոյություն ունեցող հիմնական իմաստային հարաբերությունների մասին (ինչպես՝ հոմանիշություն, հակահիշություն, համանունություն և այլն),
- քերականական կարգերի մասին (թիվ, հոլով, դեմք, եղանակ, ժամանակ և այլն),

- տարբեր ժանրերի և ոճերի տեքստերի մասին՝ որպես մարդու խոսքային գործունեության արդյունք (պատմություն, նկարագրություն, դատողություն, մենախոսության և երկխոսության կառուցվածքային առանձնահատկություններ), ինչպես նաև հանրամշակութային տեղեկատվության աղբյուր:

Հետազոտության հիմնական նպատակն է՝ թե որքանով են բառաքերականական ու լեզվական (աուդիտ) մեթոդներն ու հնարներն արդյունավետ գերմաներենի „Լրատվամիջոցները,, թեման 10-րդ դասարանում դասավանդելիս:

Ելնելով նշված նպատակից ուսումնասիրվել են հետևյալ խնդիրները՝

Գերմաներեն լեզվի բառաքերականական տիպաբանությունը և նրա առանձնահատկությունները

Լեզվական տիպաբանության առարկան և նրա խնդիրները

Հնչյունաբանություն

Ձևաբանություն

Գոյական

Ածական

Բայ

Գերմաներենի ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները

Աշխատանքը ավարտվում է եզրաացությունով ինչպես նաև օգտագործված գրականության ցանկով:

ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ (ԱՈՒԴԻՏ) ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ
ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ „MASSENMEDIEN,, ԼՐԱՏՎԱՄԻԶՈՑՆԵՐԸ ԹԵՄԱՆ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ
ԴԱՍԱՎԱՆԴԵԼԻՍ:

ԳԵՐՄԱՆՆԵՐՆ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Ներկայիս գլոբալացված աշխարհում լեզվական շփումներն առօրեական են դարձել, ինչն էլ առաջ է բերում միասնական լեզվական ստանդարտների անցման անհրաժեշտություն: Այդպիսի միտումը անմիջական ազդեցություն է թողնում նաև գերմաներեն լեզվի և նրա դասավանդման ընդհանուր հայեցակերպի վրա՝ ձևավորելով «լեզվի քաղաքականությունը»,

որի առանցքում աշխարհում գերմաներենի տարածումը, նրա դերի բարձրացումը և համաշխարհային դիրքերի ամրապնդումն է:

Գերմաներենի թեմաները 10-րդ դասարանում 10-րդ դասարանում դուք հետագայում կզարգացնեք ձեր հռետորական հմտությունները խոսելու և լսելու ուսումնական ոլորտում և կբարելավեք ձեր խոսելու և ներկայացման հմտությունները: Դուք մարզվում եք շնորհանդեսներով և դասախոսություններով՝ ձեր գիտելիքները հակիրճ և հակիրճ փոխանցելու համար, որպեսզի ձեր լսարանը հեշտությամբ հետևի ձեզ: Դուք գործ ունեք խոսքի կառուցվածքի հետ և սովորում եք վերլուծել այն: Ձեր խոսակցական հմտությունները նույնպես զարգանում են: Դուք ծանոթանում եք բանավեճի կառուցվածքին և ձևին նրա հատուկ լեզվական ձևավորման գործիքներով: Դուք կհանդիպեք հաղորդակցման առաջին մոդելներին, ինչպիսիք են Ֆրիդեման Շուլց ֆոն Թունի չորս ականջի մոդելը (հաղորդագրության քառակուսի) և կկարողանաք դրանք կիրառել խոսակցական իրավիճակներում:

Դեռ վստահ չե՞ք ձեր ուղղագրության մեջ: Ոչ մի խնդիր! 10-րդ դասարանում դուք կրկնում եք բոլոր համապատասխան թեմաները, ինչպիսիք են մեծատառով և փոքրատառով կամ առանձին/համակցված ուղղագրությամբ և կիրառում դրանք տարբեր խառը վարժություններում: Կխորանա օտար բառեր և տեխնիկական տերմիններ, ինչպես նաև հնչյուններով բառեր ճիշտ գրելու ձեր կարողությունը:

Դուք նաև համատեղում եք կետադրական նշանների գիտելիքները խառը վարժություններում: Բացի այդ, դուք դրանք օգտագործում եք ձեր սեփական տեքստերը բարելավելու համար, օրինակ. Կետադրական նշանների միջոցով մտքերը շեշտադրելով Բ.

Գրական տեքստերի և փաստացի տեքստերի հետ շփվելիս 10-րդ դասարանում դուք հետագայում կզարգացնեք տեքստերի վերլուծությունն ու մեկնաբանությունը՝ հաշվի առնելով ոչ միայն ժանրային, այլև դարաշրջանի բնորոշ հատկանիշները: Պատմվածքը, ինչպես բանաստեղծությունները կամ դրամատիկական տեքստերը, նույնպես կարևոր դեր է խաղում 10-րդ դասարանում: Դուք կարող եք գնալով ավելի ինքնուրույն աշխատել մեկնաբանության էսսեների վրա՝ հաշվի առնելով բովանդակությունը և ֆորմալ առանձնահատկությունները, ինչպիսիք են պատմվածքը և խոսքի ձևերը: Դրամատիկայում սովորում ես տարբերակել փակ և բաց ձևերը, ինչպես նաև դասական և էպիկական թատրոնը:

Այսպես, գերմաներենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդման մեջ փոխանցման երևույթներ կարող են դիտարկվել բոլոր լեզվական մակարդակներում՝ հնչյունական, բառային, քերականական, ինչպես օրինակ՝

- Համարժեք ձևեր հնչյունական մակարդակում՝ արտասանությամբ, գրությամբ, կազմությամբ և իմաստով նման ձևեր. Tanzen/to dance, der Elefant/the elephant, beginnen/to begin, die Hausarbeit/the homework;
- Լատինատառ գրություն;
- Որոշյալ և անորոշ հոդի առկայություն և գործածության նման սկզբունքներ. Das ist ein Buch. Das Buch ist neu./This is a book. The Book is new.
- Նախադասության համարժեք մոդելներ. Er ist krank./ He is ill. Es ist kalt./ It is cold.
- Ժամանակաձևերի կազմության ընդհանրություններ՝ երեք հիմնական ձևեր, ձայնադարձի շարքեր. kommen-kam-gekommen/come-came-come, վաղակատարի կազմություն. have+Particip II/haben/sein/ +Partizip II;
- Եղանակավորող բայեր. Müssen/must, können/can, dürfen/may:'

Վերը թվարկված ձևերը և շատ այլ բազմաթիվ երևույթներ կարող են հիմք հանդիսանալ գերմաներենի՝ որպես երկրորդ օտար լեզվի բուհական դասընթացում սովորողների մեջ երկրորդ լեզվի հանդեպ գիտակցված մոտեցում ձևավորելու համար, ինչի շնորհիվ նվազում է առաջին լեզվի բացասական ազդեցության գործոնը:

Մինչդեռ առաջին լեզվի իրողությունների գիտակցված փոխանցումը թողնում է միանշանակ դրական ազդեցություն, այս դեպքում խոսքը դրական փոխանցման երևույթի մասին է:

Լեզվական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների դրական փոխանցումը երկրորդ օտար լեզվի ոլորտ ապահովում է վերջինիս արագ ու արդյունավետ յուրացումը: Այս դեպքում պակաս կարևոր չէ նախնական տրամադրվածությունը լեզվի նկատմամբ: Անհրաժեշտ է տվյալ փուլում ուսանողների մեջ ձևավորել դրական տրամադրվածություն գերմաներենի հանդեպ՝ հերքելով տվյալ լեզվի անհաղթահարելի բարդությունների վերաբերյալ կարծրատիպային մոտեցումը՝ ցույց տալով, որ այն գտնվում է իրենց իմացական գիտելիքների մակարդակում: Այս տեսակետից կարևոր գործոն է համարվում գերմաներենում մեծ թվով անգլերեն բառերի առկայությունը:

Գերմաներենի՝ որպես երկրորդ օտար լեզվի բուհական դասընթացի շրջանակներում առանձնացվել են անգլիաբանությունները: Անգլերեն տարրերը գերմաներենում բնութագրվում են մեկ ընդհանուր՝ “Denglisch” սահմանումով:

Այդպիսի ներթափանցումները գերմաներենի բառապաշարում բացասական են գնահատվում, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով: Չանդրադառնալով, սակայն, գերմաներենի ընդհանուր լեզվական պատկերի խաթարման հարցում անգլերեն բառերի գործածությանը՝ նշենք, որ դրանցից շատերը գալիս են պատմական տարբեր

Ժամանակաշրջաններից և գործածություն են գտնում նաև եվրոպական այլ լեզուներում:
Վերջինները բնութագրվում են «միջազգային բառեր» եզրույթով:

Այդպիսի տարրերը բառապաշարում գերակշռում են տնտեսության, սպորտի, քաղաքականության, գիտության, մամուլի, տեխնիկայի, ոլորտներում:

Անգլիաբանությունները և միջազգային բառերը գերմաներենի բառապաշարում ներառվում են՝ հարմարեցվելով լեզվի հնչյունական և քերականական կանոններին:

Վերջինիս շնորհիվ գերմաներենը շարունակում է մնալ աշխարհում ամենապահանջված օտար լեզուներից սովորողների թվով, ինչը պայմանավորված է համաշխարհային մասշտաբով գերմանախոս երկրների զբաղեցրած առաջատար դիրքով գիտության, կրթության և տնտեսության ոլորտներում

Ժամանակակից գերմաներենի տիպաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունն այսօր լայն թափ է ստացել և դրանց վերաբերյալ հրատարակվում են բազմաթիվ տարաբնույթ ուսումնասիրություններ:

Սակայն խնդիրն այն է, որ գերմաներենի տիպաբանական յուրահատկությունների բացահայտումը կատարվում է հիմնականում եվրոպական լեզուների և հատկապես անգլերենի համադրությամբ:

Մինչդեռ մեր մայրենի լեզվի փաստերի հիման վրա կատարվող քննությունը նույնպես բացահայտում է հետաքրքիր իրողություններ: Հատկանշական է, որ, անկախ ցեղակցական պատկանելությունից, գերմաներենի և հայերենի քերականական համակարգերը ունեն կառուցվածքային և գործառական տիպաբանական ոչ պակաս կարևոր ընդհանրություններ:

Գերմանական լեզուներում պատմական զարգացման ընթացքում բայական ժխտական մասնիկը դարձել է առավել ծանրակշիռե, հաստատուն և լիարժեք բավարար միջոց ժխտում արտահայտելու համար:

Դա է պատճառը, որ այդ լեզուներում խիստ հազվադեպ է զգացվում միաժամանակ այլ ժխտական տարրերի կիրառման անհրաժեշտություն: Բազմաժխտական լեզուներում նախադասության մեջ կիրառված ժխտականներից մեկը համարվում է առաջնային, մյուսները՝ երկրորդային կամ լրացուցիչ:

Առաջնային է այն ժխտական տարրը, որն անկախ է, և որի առկայությունը առաջ է բերում համապատասխան միտք արտահայտելու անմիջական ցանկություն:

Երկրորդային է այն ժխտական տարրը, որի կիրառումը ասույթում մի որևէ այլ ժխտականի առկայության հետևանք :

Լեզվի ուսուցման նախնական փուլերում կարելի է համագործակցային մեթոդով ուսանողների շրջանում հասնել նշված նպատակին: Օրինակ՝ կարելի է 10-15 ուսանողական համակազմով խմբից ձևավորել 2 կամ 3 խումբ: Խաղի կանոնները բացատրելուց հետո նախանշված ժամանակահատվածում (10-15րոպե) ուսանողները պետք է հնարավորինս միջազգային շատ բառեր գրի առնեն, որոնք արդեն ծանոթ են իրենց գերմաներենի դասընթացից, գործածական են նաև այլ լեզուներում՝ ռուսերենում, երբեմն նաև հայերենում: Ժամանակի ավարտից հետո դասավանդողը ստուգում է յուրաքանչյուր թիմի արդյունքները, ուղղում սխալները և հաշվում միավորները:

Հաղթող թիմը ներկայացնում է իր բառացանկը, այնուհետև մրցակից թիմը կամ թիմերը լրացնում են տվյալ բառացանկը չհնչած բառերով: Դասավանդողն ընթացքում ներկայացնում է դրանց գերմաներեն համարժեքները, եթե այդպիսիք առկա են, տվյալ բառերի ճիշտ արտասանությունը և գրությունը գերմաներենում՝ այսպիսով հնարավորություն տալով ուսանողներին համալրելու իրենց բառապաշարը որոշակի բառերով և դասը դարձնելու առավել հետաքրքիր և ոչ ֆորմալ:

Ժամանակակից հայերենում առաջնային ժխտական տարրեր են ժխտման բառաքերականական միջոցները, քանի որ դրանց առկայությունը ասույթում առաջ է բերում բայի ժխտական ձևերի գործածման անհրաժեշտություն, մինչդեռ հակառակ երևույթը հատկանշական չէ:

Ըստ Օ. Եսպերսենի՝ մենաժխտական լեզուները բազմաժխտական լեզուների համեմատ զգալի առավելություն ունեն, քանի որ ավելի համակարգված են ու միաձույլ, և միակի ժխտումով նախադասության արտաբերումը խոսողից և դրա ընկալումը լսողից պահանջում են մտավոր գործունեության ավելի մեծ լարվածություն :

Հարկ է նշել, որ լեզուների դասակարգումը մենաժխտական և բազմաժխտական տիպերի ճշգրիտ է համարվում միայն լեզվի տվյալ փուլի ուսումնասիրության դեպքում: Մասնագիտական գրականության մեջ տարբեր լեզուների ժխտման կարգի տարածմանակյա ուսումնասիրությունը ցույց է տալիս բազմաժխտականից անցում դեպի մենաժխտական համակարգ և ընդհակառակը:

Ժամանակակից գերմաներենը, ի տարբերություն հայերենի, մենաժխտական լեզու է, այսինքն՝ ժխտական նախադասության մեջ կարող է գործածվել մեկ ժխտական տարր: Գերմաներենում դա բացատրվում է առհասարակ քերականական կառույցների հնարավորինս միավորման ընդհանուր հակվածությամբ: Բազմաթիվ լեզվական փաստերը վկայում են, որ մենաժխտականությունը և բազմաժխտականությունը հարկ է բնութագրել ոչ որպես լեզվի կառուցվածքային համակարգի լիարժեքության կամ անլիարժեքության հատկանիշ, ոչ որպես լեզվի զարգացման մակարդակ, այլ որպես լեզվի կառուցվածքային համակարգում հարաշարժ գործընթացի արդյունք, մի գործընթաց, որը պատմական

գարգացման ընթացքում մշտապես ձգտում է լեզվական երևույթների արտահայտման առավել համապատասխան և ճկուն տարբերակների ստեղծմանը, լեզվի ներքին կառուցվածքի կատարելագործմանը: Գերմաներենի ժխտման բառաքերականական միջոցներից առանձնացվել են *nie, niemals, nimmer, nimmermehr, nirgends, nirgendwo, nirgendwohin, keineswegs, keinesfalls* ժխտական մակբայները, և փորձ է արվել դրանց առանձնահատկությունները ներկայացնել հայերենի համարժեք փաստերի գուգադրմամբ:

Գերմաներենի լեզվական տիպաբանության առարկան և նրա խնդիրները

Լեզվաբանական այն գիտակարգը, որը գաղտնի է ցեղակից և ոչ ցեղակից լեզուների կառուցվածքային առանձնահատկությունների նմանությունների և տարբերությունների ուսումնասիրությամբ կոչվում է տիպաբանություն:

Լեզուների կառուցվածքային նմանություններն առաջանում են երկու ճանապարհով՝ կա՛մ կառուցվածքային փոխառությունների միջոցով, որի արդյունքում մեկ լեզվի իմաստաբանական, լեզվաբանական և շարահյուսական առանձնահատկությունները պատճենվում են մյուս լեզվում, կա՛մ էլ տարբեր լեզուների ինքնուրույն գարգացման մեջ նման միտումների գործողությամբ, որոնք նախապես ձևավորել են համապատասխան լեզվական համակարգերում:

Բնականաբար, տարբեր կարգի պատճենումները լեզուների միջնորդավորված կամ անմիջական շփման հետևանք են: Վերջինս էլ ենթադրում է առաջին հերթին այդ լեզուների տարածման աշխարհագրական ընդհանրություն, իսկ եթե այդ շփումը անմիջական չէ՝ ապա համապատասխան լեզվական հանրությունների քաղաքական կամ մշակութային երկարամյա կապեր:

Հակառակ դեպքում՝ գործ ունենք նույն կարգի ներլեզվական միտումների գործողության արդյունքում առաջացած նմանությունների հետ, որոնք էլ տիպաբանական լեզվաբանության կամ լեզվաբանական տիպաբանության ուսումնասիրության հիմնական առարկան են: Իսկ լեզվական շփումների արդյունքում առաջացած նմանություններով գաղտնի է արեալային կամ տարածքային լեզվաբանությունը:

Լեզուների տիպաբանական ուսումնասիրությունը կատարվում է սովորաբար ըստ երկու սկզբունքների՝ հարցաթերթային և չափանմուշային: Առաջին սկզբունքի դեպքում առաջնային է դիտվում այն հատկանիշների ամբողջությունը, որոնք մնութագրում են կոնկրետ լեզուն:

Այսպես, օրինակ՝ խուլ և ձայնեղ բաղաձայնների հակադրությունը բնորոշ է լեզուների մեծ մասին, սակայն չինարենի մանդարինյան լեզվաբանական ձայնեղ բաղաձայններ չունի:

Տարբեր լեզուներում ի հայտ եկող նման հատկանիշները հիմք են համապատասխան տիպաբանական չափանիշների մշակման համար: Քանի որ հարցաթերթային սկզբունքը

մասնավոր հատկանիշներից գնում է դեպի ընդհանուրը, այն անվանվում է նաև ինդուկտիվ: Կախված տիպաբանական ուսումնասիրության արդյունքների ներկայացման ձևից՝ տարբերում են որակական և քանակական տիպաբանություն հասկացությունները: Որակական տիպաբանության վերջնական նպատակը, ըստ էության, լեզուների տարբեր կարգի դասակարգումներն են՝ դրանց ենթահամակարգային կառուցվածքների համեմատությամբ:

Ընդ որում, այստեղ առաջնային են լեզուների տիպաբանորեն էական հատկանիշները, որոնք մնութագրում են լեզվի որակական կողմը:

Ասվածը առաջին հերթին վերաբերում է քերականական կարգերին և քերականական արտահայտության միջոցներին, որոնց առկա- յությունը համապատասխան ձևերով կամ մացակայությունը (փոխարինվող ձևերի առկայությամբ) ներկայացնում են կոնկրետ լեզվի որակական առանձնահատկությունները, ինչպես, օրինակ, քերականական սեռի կարգի առկայությունը, այն հոդերի ու վերջավորությունների օգնությամբ արտահայտելու հնարավորությունը գերմաներենում և այդ կարգի իսպառ բացակայությունը հայերենում:

Նկատի ունենալով նաև, որ տիպաբանության տեսակետից առավել էական է լեզվի ձևաբանական կառուցվածքը, որի հիմքում նրա հնչույթային համակարգն է, այստեղ անդրադառնում ենք հիմնականում գերմաներենի հնչյունաբանական (հնչույթաբանական) և ձևաբանական յուրահատկությունների վերլուծությանը՝ ներգրավելով նաև հայոց լեզվի համապատասխան փաստերը, իսկ շարահյուսական կառուցվածքները քննարկվում են միայն ընդհանուր գծերով:

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարկ է նշել, որ գերմաներենի հնչույթային համակարգի տիպաբանական առանձնահատկությունների բացահայտման համար, ի տարբերություն մյուս հնդեվրոպական լեզուների, հայոց լեզուն իր հնչույթային յուրահատուկ կառուցվածքով ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում:

Մյուս կողմից, թեև ծագումնաբանորեն գերմաներեն և հայերեն լեզուները պատկանում են նույն լեզվաընտանիքին, սակայն դրանց պատմական զարգացման արդյունքում ձևավորվել են ընդհանուր առմամբ տարբեր հնչյունային (հնչույթային) համակարգեր:

Նախ՝ կարևոր է այն փաստը, որ գերմաներենի և հայերենի հնչույթների քանակային տարբերության հիմքում հիմնականում որակայնությունն է, որի հետևանքով գերմաներենում ունենք 18 ձայնավոր (ներառյալ 3 երկբարբառները)՝ հայերենի 6 ձայնավոր հնչույթների դիմաց և 23 բաղաձայն՝ հայերենի 30 բաղաձայն հնչույթների դիմաց:

Այսպիսով՝ առաջին հայացքից էլ պարզ է, որ գերմաներենի տիպաբանական յուրահատկություններն առավել տեսանելի են ձայնավորական, քան բաղաձայնական համակարգում, եթե նկատի ունենանք, որ այստեղ հիշյալ յուրահատկությունները փորձ է արվում վեր հանել հայերենի համապատասխան փաստերի օգնությամբ: Ուստի, նախ՝ կարևոր է ճշտել գերմաներենի հնչույթային համակարգին մտրոշ որակական առանձնահատկությունները:

Նման վերլուծության համար, իհարկե, նպատակահարմար է ելնել հնչույթի ուժեղ դիրքի և նրա տարբերակիչ հատկանիշների սահմանման սկզբ- լուծումներից:

Հնչույթի ուժեղ դիրք ասելով՝ հասկանում ենք այն դիրքը, որտեղ հնչույթը հանդես է գալիս իր լուծում հատկանիշներով:

Այլ կերպ՝ դա այն դիրքն է, երբ շրջակայքի հնչյունների ազդեցությունը նվազագույն է կոնկրետ հնչյունի վրա և այն լիակատար կերպով դրսևորում է իր բնախոսական արտասանական առանձնահատկությունները:

Դրա հետ սերտորեն կապված է հնչույթի տարբերակիչ հատկանիշների սահմանումը, երբ վեր են հանվում հնչույթի այն կայուն հատկանիշները, որոնք առկա են նրա լուծում տարբերակներում:

Ձայնավորների և մաղա- ձայնների հնչույթային արժեքը մացահայտվում է հակադրական գույգերում, այսինքն՝ այնպիսի գույգ մատերում, որոնք իրենց արտահայտության պլանում տարբերվում են միայն տվյալ հնչույթով կամ հատկանիշով:

Զույգային հակադրության եղանակով կարելի է հասնել հնչույթների տարբերակիչ հատկանիշների առանձնացմանը, որը և կազմում է հնչույթային վերլուծության վերջնական փուլը:

Գերմաներենի և հայերենի ձայնավոր հնչույթները գույգադրելիս ի հայտ են գալիս հետևյալ առանձնահատկությունները.

ա) գերմաներենում ձայնավորի տևողության տարբեր աստիճանները տարբերակիչ հատկանիշներ են, և նույն հնչույթային կազմության մեջ երկար - կարճ հատկանիշների հակադրությամբ տարբերակվում են իմաստներ, օր.՝ Staat[ʃta:t]-Stadt[ʃtat]:

Դրան հակառակ՝ հայերենում ձայնավորի տևողությունը տարբերակիչ հատկանիշ չէ, և եթե այն առկա է, ապա միայն վանկերի տարբեր քանակի կապակցությունների, հնչյունաշղթայի տարբեր հատույթների կամ խոսելիս՝ սուպլեկտիվ վերաբերմունքի դրսևորման համար:

Նույն կերպ՝ հայերենում բացակայում է ժամանակակից գերմաներենին բնորոշ փակ (նեղ) - բաց (լայն) հնչույթային հատկանիշների հակադրությունը:

Այս հանգամանքը պայմանավորված է արտասանության ժամանակ լեզվի մակերեսի կծկված կամ փռված լինելու իրողությամբ, ինչպես՝ Beet[be:t]-Bett[bet]:

Ընդ որում, այս հակադրությունը միևնույն ժամանակ ուղեկցվում է երկար - կարճ տարբերակիչ հատկանիշների հակադրությամբ:

Գերմաներենում երկբարբառների առկայության պայմաններում ունենք նաև հատկանիշների սահուն - ոչ սահուն հակադրությունը, որը երկարաբառային արտասանության առանձնահատկություն է, ինչպես՝ kein[kœn]-Kahn[ka:n] կամ kaum[kaum]-kam[ka:m]:
Երկբարբառների բացակայությունը հայերենում, բնականաբար, այս հակադրությունը չի ենթադրում:

Գերմաներենին մտրոշ շրթնայնացվածության և ոչ շրթնայնացվածության հնչույթային հակադրությունը նույնպես կարևոր տեղ է գրավում տարբերակիչ հատկանիշների շարքում, ինչպես՝ kËssen [ˈkysən] - kËssen[ˈkisən]:

Հայերենում, ի տարբերություն գերմաներենի, շրթնայնացվածությունը շատ ուժեղ չէ, սակայն այն, այնուամենայնիվ, հանդես է գալիս որպես տարբերակիչ հատկանիշ (տար - տուր, գալ - գոլ և այլն):

բ) Ըստ շարքայնության և լեզվի բարձրացման հատկանիշների՝ գերմաներենի և հայերենի ձայնավորների միջև առկա է որոշակի ընդհանրություն, թեև գերմաներենը կրկին ցուցաբերում է մի շարք յուրահատկություններ:

Նախ՝ հիշենք, որ ձայնավորների շարքայնության հատկանիշը առաջանում է լեզվի հորիզոնական շարժումով դեպի առաջ, ընդ որում, առաջին շարքի ձայնավորների արտաբերման ժամանակ մասնակցում է լեզվի առաջին մասը, իսկ ամբողջ լեզուն ձգվում է դեպի առաջ, մյուս ձայնավորներն արտաբերելիս՝ լեզուն համեմատաբար պակաս է ձգվում:


Այդպիսով՝ գերմաներենի հետին շարքի [u:], [v] և [o:], [ɔ] [ձայնավոր հնչույթների դիմաց ունենք հայերենի ա, օ (ո), ու հնչույթները, առաջին շարքի [i:], [l], [e:], [ɛ], [ɛ:], [y:], [ʏ], [ɤ:], [œ] հնչույթների դիմաց՝ է (ե), ի և միջին շարքի [a:], [a]-ի դիմաց՝ միայն ը:

Ինչպես տեսնում ենք, ամենամեծ քանակային տարբերությունը առկա է առաջին շարքում, որը բացատրվում է հիմնականում հայերենում տևականության հնչույթային հատկանիշի և մասամբ՝ փակ - բաց հակադրության բացակայությամբ:

Մյուս տարբերությունն էլ այն է, որ եթե հայերենի ա-ն հետին շարքի է, ապա գերմաներենի համապատասխան հնչույթն իր երկար և կարճ տարբերակներով միջին շարքի է և իր արտասանական բնութագրով ավելի մոտ է հայերենի ը-ին, քան ա-ին:

Այսպիսով՝ հիմք ընդունելով լեզվաբանական գրականության մեջ ընդունված ձայնավորական եռանկյունին (Հելվազի եռանկյունի), որտեղ երկու չափումներով

ներկայացվում է համապատասխան ձայնավորի շարքայնացումը և բարձրացումը, գերմաներենի և հայերենի համար ունենում ենք հետևյալ համադրական պատկերը.



Ընդհանուր առմամբ, գերմաներենի ձայնավորական համակարգի տիպաբանական յուրահատկությունները պայմանավորված են նրա մնախոսական բնութագրերով, որոնց թվում պետք է նշել գերմաներենի ձայնավորների արտաբերման ժամանակ մկանային լարվածության առավել լայն աստիճանը հայերենի նկատմամբ, նախածանցների, ինչպես նաև արմատների շեշտակի ձայնավորների արտաբերման ավարտի յուրահատուկ մնույթը և առաջին շարքի ձայնավորների արտասանության ժամանակ լեզվի առավել առաջ ձգված լինելու հանգամանքը:

Գերմաներենի ձայնավորական համակարգի մնութագրման համար առանձին կարևորություն ունի [ə] և [ɔ] կրճատ հնչույթների խնդիրը:

Վերջինիս բարդությունն այն է, որ գերմանագիտական լեզվաբանության մեջ չկա միասնականություն այդ հնչույթների բնորոշման մեջ:

Նախ՝ գերմաներենի վերոհիշյալ հնչույթները դժվար է դիտել որպես ինքնուրույն հնչույթներ, քանի որ դրանք արդեն որոշակի հատկանիշներով բնութագրվող հնչույթների կրճատ արտաբերական տարբերակներ են, ինչպես՝ Bote [ˈbo:tə], Kohle [ˈko:lə] և այլն:

Բացի այդ, ըստ ծագման, եթե [ə]-ն ձայնավորական է, ապա [ɔ]-ն՝ ձայնորդական, թեև արտաբերման տեսակետից համարյա նույնական են: Այս հնչույթները հիմնականում

հանդիպում են մառավերջի հնչույթային հատույթներում և կարելի է բնորոշել որպես անշեշտ վանկում արտասանության թուլացման արդյունք:

Հարկ է նշել, որ հայերենն այն լեզուներից է, որն իր ջ (ը) հնչույթի օգնությամբ հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացում կազմել գերմաներենի նշված կրճատ ձայնավորների առանձնահատկությունների մասին:

Այստեղ պետք է նկատի ունենալ հատկապես այն հանգամանքը, որ հայերենի ը-ն նույնպես ներկայացնում է ձայնավորների (ի, ու, ա) թուլացված տարբերակը, ինչպես, օրինակ՝ գիր - գ(ը)րել կամ տուն - տ(ը)նակ և այլն՝ որպես արմատական ձայնավորի թուլացում:

Որպես հնչունային կազմի անդամ՝ հայերենի ը-ի հնչույթային արժեքը սահմանափակ է և բացի մի քանի բառակազմային դիրքերից (ըմբ-, ընդ- և այլն), այն գրության մեջ չի արտացոլվում:

Մեկ այլ խնդիր է նաև գերմաներենի [ʁ], [aʊ] և [ɔʔ] երկբարբառների տիպաբանական բնութագրերի հարցը, որոնք սահուն - ոչ սահուն հատկանիշների հակադրմամբ տարբերակում են իմաստներ, ինչպես՝ Bein [bɛ:n] - Bahn [ba:n], Zaun [tsaun] - Zahn [tsa:n], Brʉute [brɔʔtɔ] - Brote [ˈbro:tɔ] և այլն:

Ժամանակակից գերմաներենի մաղաձայնական համակարգի տիպաբանական յուրահատկությունների մացահայտումը հայերենի օգնությամբ, մացառությամբ առանձին դեպքերի, ընդհանուր առմամբ, մա- վականաչափ արդյունավետ է:

Վերջինս բացատրվում է այն հանգա- մանքով, որ, ի տարբերություն մի շարք այլ ցեղակից լեզուների, հայերենն իր տրամադրության տակ ունի բազմաբնույթ բաղաձայնական շարքեր:

Գերմաներենի բաղաձայնների բնախոսական առանձնահատկությունների տեսակետից կրկին կարևոր է արտաբերման ժամանակ առավել ուժեղ մկանային լարվածությունը, քան հայերենում է, ինչպես նաև վերջինիս հակադրությամբ, գերմաներենի բաղաձայնների արտաբերման համար անհրաժեշտ արտամղվող օդի ավելի մեծ ուժը:

Նման առանձնահատկությունները մեծ դեր ունեն բաղաձայնների ձևավորման մեջ այն առումով, որ վերջիններիս ամենակարևոր ընդհանուր բնութագիրը նրանց տեղայնացվածությունն է:

Այսպիսով՝ կատարված վերլուծություններից հետևում է, որ հայերենն այն լեզուներից է, որն ի վիճակի է առավելագույն չափով արտացոլելու գերմաներենի հնչույթային համակարգի տիպաբանական առանձնահատկությունները:

Այս ամենով հանդերձ, կարելի է առանձնացնել ժամանակակից գերմաներենի հնչույթային համակարգի տիպաբանական յուրահատկությունների հիմքում ընկած այն միտումները, որոնք ի հայտ են գալիս հայերենի հետ զուգադրելիս.

Գերմաներենին բնորոշ է մառային առավել ուժեղ շեշտադրումը, ինչը հանգեցնում է անշեշտ ձայնավորների կրճատմանը

Երկար ձայնավորների արտաբերման ժամանակ շուրթերի առավել լարվածությունը:

Երկար և կարճ ձայնավորների տարբերակումը որպես գերմաներենում համապատասխան իմաստագատիչ հատկանիշների դրսևորման հետևանք:

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձևաբանական երևույթների տիպաբանական վերլուծությունը, որպես կանոն, իրականացվում է կառուցվածքային առանձնահատկությունների և քերականական կարգերի իրացման հնարավորությունների տեսակետից:

Առաջին դեպքում քննարկվում են լեզվի տարամնույթ քերականական կարգերի ձևական կողմը, բացահայտվում են դրանց կազմության յուրահատկությունները, որոնց հիման վրա սահմանվում են համապատասխան ձևաբանական կաղապարները՝ համեմատաբար պարզ կառույցից մինչև բարդը: Երկրորդ մոտեցմամբ՝ ուշադրությունը կենտրոնացվում է առանձին քերականական կարգերի իրացմանը կոնկրետ լեզվում՝ հետագայում մեկ այլ լեզվի (կամ լեզուների) հետ զուգադրման նպատակով:

Ընդ որում, երկու դեպքում էլ կարող են գործադրվել վերոհիշյալ լեզվական իրողությունների ուսումնասիրության տարբեր մեթոդներ՝ լինի ձևաբանական կազմությունների ավանդական վերլուծությունը՝ ըստ ձևային միավորների, թե ժամանակակից լեզվական ընդհանրությունների (ունիվերսալիաների) կամ ներլեզվական միտումների սահմանման սկզբունքները:

Միննույն ժամանակ բառակազմական տարբերությունները միայն ձևական բնույթի են, ինչպես օրինակ՝ գերմաներենի -ung, -heit, -keit բառակազմական ածանցների համապատասխանում է հայերենի -ություն-ը կամ -chen, -lein փոքրացուցիչ ածանցներին՝ -իկ-ը կամ ուրիշ ձև և այլն:

Այսինքն՝ բառակազմական երևույթների զուգադրմամբ՝ կարելի է բացահայտել միայն քերականական իմաստների արտահայտման միջոցների տարբերությունը, ինչը բնական իրողություն է:

Այդ պատճառով լեզուների տիպաբանական յուրահատկությունները ձևաբանության բնագավառում առավելապես դրսևորվում են բառափոխության մեջ, որտեղ լեզուները տարբերվում են ոչ միայն քերականական արտահայտության միջոցներով, այլ նաև՝ թե ի՞նչ է արտահայտվում:

ԳՈՅԱԿԱՆ

Գերմաներենի և հայերենի խոսքի մասերը զուգադրելիս՝ ի հայտ է գալիս լիակատար նույնություն գոյականի արտահայտած ընդհանուր իմաստի տեսակետից, իսկ, ըստ քերականական իմաստների արտահայտման, կամ, ըստ քերականական կարգերի՝ տարբերությունները մեծ չեն:

Հիշենք, որ գոյականը, որպես խոսքի մաս, արտահայտում է առարկայնության ընդհանուր իմաստ, իսկ արտահայտության կառուցվածքային պլանում գոյական մասերը ներկայանում են իբրև բառաքերականական մեկ խմբավորում. գրեթե լուրջ էլ ունեն նույն քերականական կարգերը, ենթարկվում են մատափոխական ու մատագուգորդումների նույն օրինաչափություններին, ունեն կիրառական - գործառական նույն դերը, կատարում են հիմնականում շարահյուսական նույն պաշտոնները, այլ կարգի մասերից նկատելի չափով տարբերվում են նաև բառակազմական կաղապարներով:

Անվանական կարգերի գերակշիռ մասը (թիվ, սեռ, դաս, հոդային առումներ, հոլով, շնչավորի ու անշունչի, անձի ու իրի կարգեր) մտորոշ է գոյականին կամ՝ նաև գոյականին:

Գերմաներենում սեռի կարգի կարևոր տիպաբանական առանձնահատկություն է նաև սերտ կապը գոյականի սեռի և հոլովման տիպի միջև, որն արտահայտվում է գոյականների առանձին իգական հոլովման, ինչպես նաև չեզոք և արական սեռի գոյականներն ընդգրկող ուժեղ հոլովման և արական սեռի մի քանի տիպերն ընդգրկող թույլ հոլովման տարբերակմամբ:

Նման կախվածություն գոյություն ունի նաև գոյականի սեռի և հոգնակի թվի կազմության միջև: Նշված հարաբերություններն իրենց արտացոլումն են գտնում լեզվի շարահյուսական կառուցվածքում, որտեղ սեռը որոշչային մարդություններում համաձայնեցման կարևոր տարր է. հմմտ.՝ eine nette Frau, ein kleines Kind, dieser schÖne Abend և այլն:

Գերմաներենում ևս հավաքական թիվը կարող է արտահայտվել պարզ ձևերով, ինչպես՝ das GebΉsch, der Adel, das Laub կամ հավաքականակերտ -tum, -schaft վերջածանցներով, ինչպես նաև ge- նախա- ծանցով. օր.՝ das Bauerntum, die Studentenschaft, das Geschirr, das GeflΉgel և այլն:

Ամփոփելով՝ նշենք, որ թվի քերականական գործառնությունը սերտորեն կապված է գոյականի բառային իմաստից այնպես, որ թիվը հաճախ բազմիմաստ բառի առանձին իմաստների տարբերակիչ հատկանիշ է հանդես գալիս:

Դա բացատրվում է այն հանգամանքով, որ բազմիմաստ գոյականը մի քանի իմաստներով հաշվելիություն, իսկ այլ դեպքերում անհաշվելիություն է արտահայտում:

Ասվածը վերաբերում է հատկապես համանուններին: Այսպես, օրինակ, *der Gebrauch* գոյականը անհաշվելի է և անհոգնական իմաստով նշանակում է «գործածություն, օգտագործում» (*der Gebrauch von Messer und Gabel*), իսկ *die Gebräuche* հոգնակի ձևը նշանակում է «ժողովրդական սովորություններ» (*alte Volkliche Gebräuche*): Ուստի պարզ է, որ *der Gebrauch* և *die Gebräuche* թափանց լծորդական ձևեր չեն, քանի որ իրենց բառային իմաստներով միմյանց հետ չեն առնչվում:

ԱՇԱԿԱՆ

Հայերենում և գերմաներենում որակական ածականները հարաբերականներից տարբերվում են ոչ միայն նշված իմաստաբանական հատկանիշներով. կան նաև կառուցվածքային՝ ձևաբանական, բառակազմական, մասամբ և՛ կիրառական տարբերություններ:

Այսպես՝

ա) որակականների զգալի մասը կարող է համեմատության աստիճաններ կազմել, իսկ հարաբերականն այդպիսի աստիճաններ չունի,

բ) կան արմատական և բաղադրյալ (բարդ, ածանցավոր) որակականներ. հարաբերականները սովորաբար բաղադրյալ են,

գ) երկու լեզուներում էլ որակականը կարող է գործածվել մակբայաբար (թշնամի լինել - *Feind sein*, հանգիստ նստել - *ruhig sitzen*, առույգ աշխատել - *munter arbeiten*), իսկ ածանցումով այն կարող է վերածվել մակբայի. հմմտ.՝ քաջ (քաջաբար) կովեց, *feind (feindlich) sein*, մինչդեռ հարաբերականը չի կարող:

ԲԱՅ

Գերմաներենի համար կարևոր նշանակություն ունի լիիմաստ և թերիմաստ բայերի առանձնացումը:

Ըստ այդմ՝ տարբերակվում են օժանդակ և եղանակային բայերի խմբերը: Նշված բայերը նշանակալի դեր ունեն բայ - ստորոգյալի կազմության համար և հստակ կերպով հակադրվում են լիմաստ բայերին:

Օժանդակ մայերը (sein, haben, werden) ծառայում են բայի բարդ ձևերի կազմությանը, իսկ եղանակային բայերը՝ ստորոգյալի իմաստի մասնավորեցմանը կամ առանձին նշանակությունների արտահայտմանը:

Հայերենում, ըստ էության, ունենք մեկ օժանդակ բայ (լինել), որը հանդես է գալիս տարբեր ձևաբանական իրացումների տեսքով:

Եղանակային մայերի տեսակետից տարբերությունները մեծ չեն, սակայն հայ քերականագիտության մեջ դրանք դիտարկվում են եղանակավորող բառերի շարքում և քննարկվում են որպես լեզվական - հասկացական կարգ:

Բայի վերոհիշյալ տիպաբանական յուրահատկությունների էությունը առավել հստակ է բացահայտվում նրա քերականական կարգերի քննությամբ:

Մինչ այդ հարկ է նշել, որ հայերենում և գերմաներենում թեև բայի քերականական կարգերը նույնն են, սակայն թե՛ իրենց արտահայտած քերականական իմաստի և թե՛ գործառույթի տեսակետից տարբերությունները նկատելի են:

ԳԵՐՄԱՆՆԵՐՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես վերը նշվեց, գերմաներենի ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները արտահայտվում են նրա կառուցվածքային ինչպես նաև շարադասական - շարահյուսական բնութագրերով:

Հայտնի է, որ կառուցվածքային տիպաբանության հիմնադրույթները մշակվել են դեռ 18-րդ դարում: Այդ ժամանակ անգլիացի տնտեսագետ Ա. Սմիթը և գերմանացի գիտնական Ա. Շլեգելը տարբերակում են լեզուների համադրական (սինթետիկ) և վերլուծական (անալիտիկ) կառուցվածքային տիպերը:

Այս տարբերակման հիմքում մի շարք հայտնի լեզուներում քերականական կարգերի իրացումն է ձևաբանորեն ածանցների, կամ էլ, ըստ շրջաստվածի, տարբեր բառերի միջոցով: Այս առումով, համեմատելով die Werke Goethes սեռական որոշիչը die Werke von Goethe նախդրային կառույցի կամ էլ dem Goethe seine Werke դերանվա- նական որոշիչի հետ, կարող ենք արձանագրել, որ առաջինը համադրական, իսկ մյուս երկուսը վերլուծական կազմություններ են:

Այստեղ, նկատի ունենալով, որ լեզվաբանության մեջ չկա միասնություն բառի բնորոշման հարցում, կարելի է բավարարվել այն սահմանմամբ, որ ձևույթը լեզվի նվազագույն իմաստակիր միավորն է, իսկ բառը, բաղկացած լինելով մեկ կամ ավելի ձևույթներից, բնութագրվում է ձևա- մասնական կայունությամբ և շարահյուսական շարժունակությամբ: Ինչպես վերը մերված օրինակում հնարավոր չէ սեռականի –s վերջավորությունը նախորդի Goethe մառին կամ դրվի Werke մառի վերջում այն դեպքում, երբ ամբողջ Goethes ձևը կարող է դրվել Werke մառից հետո (հողի դուրս մղմամբ) կամ էլ՝ դրանից առաջ:

Ամփոփելով կարելի է եզրակացնել որ գերմաները հանդիսանալով որպես օտար լեզու հնարավորություն է տալի լայն պատկերացում կազմել 10-րդ դասարնի աշակերտների համար նոր ուղղություն ընտրելու նոր մասնագիտությամբ խորանալու ինչպես նաև որպես կատարյալ մարդ օտար լեզու իմանալու:

Գերմաններն լեզուն իրենից ներկայացնում է բարդ կատեգորիա, որի միջոցով աշակերտները կարողանում են նոր փուլ մտնել և դրանով, իսկ ասարելագործել իրենց լեզվական բնույթի խորընդոտները:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած առարկայի ուսուցիչ պետք է լիարժեք տիրապետի այն բոլոր "հրաշքներին" (ծրագրերին, կայքերին, դրանցում առկա ֆորումներին, տեսանյութերին և մասնագիտական ցանցերին), որոնցով հնարավոր է ուսումնական գործընթացը դարձնել հետաքրքիր, ժամանակակից և որակյալ:

Ամփոփելով կարող ենք ասել, որ գերմաներն լեզվի հիմնական նպատակը 10-րդ դասարանում դասվանդելիս կայանում է՝

Մասնագիտական նոր ուղղությունների կողմնորոշում

Հնարավորություն առավել խորացված և մասնագիտորեն ուսուցում աշակերտին

Նոր տերմինաբանությունների ինչպես նաև որպես եկրորդ կարևոր օտար լեզվի տրապետում

Ժամանակակից մեթոդների կիրառում և ապագայում դրանց կիրառման հնարավորություն:

Մոտիվացիա աշակերտին ուղվածություն դեպի օտար լեզուներ

Նոր հնարավորություն աշակերտին ավելի պարզ և մատչելի ուսումնասիրություն գերմաներն լեզուն:

Ամփոփելով կարելի է նշել, որ ցանկացած ուսուցիչ պետք է լիարժեք տիրապետի իր առարկային, որպեսզի կարողանալ հեշտ և մատչելի մատուցի իր գիտելիքները աշակերտներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքները, Երևան, 1987:

Admoni W. G., Entwicklungstendenzen des deutschen Sprachbaus von heute; MՖnchen, 1975

Admoni W. G., Der deutsche Sprachbau, MՖnchen, 1982.

Bach E., Universals in Linguistic Typology, London, 1968.

Ballweg J., Die Semantik der deutschen Tempusformen, DՖsseldorf, 1988.

Barz I., Nomination durch Wortbildung, Leipzig, 1988.

Bassarack A., Wurzel (n) der NatՖrlichkeit, Berlin, 1990.

Behagel O., Deutsche Syntax, Heidelberg, 1932.

Հավելվածներ

	Thema	Kompetenzen: Die SuS...
1.	Thema: Drama	<ul style="list-style-type: none"> • verfügen über erweiterte Strategien und Techniken des Textverstehens (3.3.1) • verwenden beim Schreiben eigener Texte gestalterische Mittel des Erzählens planvoll und differenziert (3.2.2) • verstehen komplexere, altersstufengemäße dramatische Texte und schätzen deren Wirkungsweisen ein (3.3.6) • erschließen auf der Grundlage eingeführter fachlichen und methodischen Wissens epischer, dramatischer Texte und stellen ihre Ergebnisse in Form eines zusammenhängenden und strukturierten, deutenden Textes dar (3.3.9) • verstehen epische Texte, erfassen deren Inhalt, Struktur und Figurenkonstellation (3.3.8) • interpretieren literarische Texte mithilfe szenischen Spiels (3.1.13) • verfassen Analysen zu Texten und Textauszügen unter Berücksichtigung formaler und sprachlicher Besonderheiten (3.2.7)
7 Wochen	Z. B. Besuch der alten Dame (Friedrich Dürrenmatt), Andorra (Max Frisch)	
Lektüre einer Ganzschrift (Drama)		
Klassenarbeit: Charakterisierung verfassen (Typ 6)	Einführung dramatischer Grundbegriffe	
2.	Textanalyse (Vorbereitung ZAP)	<ul style="list-style-type: none"> • erschließen auf der Grundlage eingeführter fachlichen und methodischen Wissens epischer, dramatischer und lyrische Texte und stellen ihre Ergebnisse in Form eines zusammenhängenden und strukturierten, deutenden Textes dar (3.3.9) • verstehen komplexere, altersstufengemäße literarische Texte und Sachtexte und schätzen deren Wirkungsweisen ein (3.3.6) • erschließen literarische Texte und Sachtexte mit Verfahren der Textanalyse (3.3.7) • setzen sprachgestaltende Mittel in unterschiedlichen Situationen bewusst ein (3.1.11/12) • verfügen über Verfahren prozesshaften Schreibens (3.2.1) • unterscheiden sicher zwischen begrifflichem und bildlichem Sprachgebrauch (3.4.6) • festigen, differenzieren und erweitern ihre Kenntnisse im Bereich der Syntax und nutzen sie zur Analyse und zum Schreiben von Texten (3.4.5) • setzen erzählerische Formen als Darstellungsmittel bewusst ein (3.1.2)
12 Wochen	• Stilmittel	
Finale-Heft	• Sprachanalyse	
ZAP-Thema 1: Textanalyse	• Zitieren • literarische Textsorten	
Klassenarbeit: Textanalyse (Typ 4)		
3.	Textsorten (Satire, Glosse, journalistische Texte)	<ul style="list-style-type: none"> • verfügen über erweiterte Strategien und Techniken des Textverstehens (3.3.1) • verwenden beim Schreiben eigener Texte gestalterische Mittel des Erzählens planvoll und differenziert (3.2.2) • beherrschen Verfahren des prozesshaften Schreibens (3.2.1) • verstehen Sachtexte, erkennen das Thema, den Argumentationsgang, die Stilmittel und beziehen Stellung zu den Aussagen (3.3.3) • untersuchen Informationsvermittlung, Wirklichkeitsdarstellung und Meinungsbildung in Texten der Massenmedien, berücksichtigen dabei auch medienkritische Positionen, • verfügen über die notwendige Fachterminologie und Methoden zur Untersuchung medial
10 Wochen	Diskontinuierliche Texte	
Finale-Heft	Informationen entnehmen, interpretieren und in Beziehung setzen	
ZAP-Thema 2: Informierendes Schreiben		
Klassenarbeit: Informierendes		
Schreiben (Typ 2)		vermittelter Texte (3.3.4/5)
4.	Wiederholung und Vertiefung der ZAP-Themen:	<ul style="list-style-type: none"> • untersuchen Informationsvermittlung, Wirklichkeitsdarstellung und Meinungsbildung in Texten der Massenmedien, berücksichtigen dabei auch medienkritische Positionen, verfügen über die notwendige Fachterminologie und Methoden zur Untersuchung medial vermittelter Texte (3.3.4/5) • erschließen auf der Grundlage eingeführter fachlichen und methodischen Wissens epischer, dramatischer und lyrische Texte und stellen ihre Ergebnisse in Form eines zusammenhängenden und strukturierten, deutenden Textes dar (3.3.9) • verstehen komplexere, altersstufengemäße literarische Texte und Sachtexte und schätzen deren Wirkungsweisen ein (3.3.6) • erschließen literarische Texte und Sachtexte mit Verfahren der Textanalyse (3.3.7) • setzen sprachgestaltende Mittel in unterschiedlichen Situationen bewusst ein (3.1.11/12) • verfügen über Verfahren prozesshaften Schreibens (3.2.1) • unterscheiden sicher zwischen begrifflichem und bildlichem Sprachgebrauch (3.4.6) • festigen, differenzieren und erweitern ihre Kenntnisse im Bereich der Syntax und nutzen sie zur Analyse und zum Schreiben von Texten (3.4.5)
2 Wochen	• Verschiedene Textsorten an ihren Merkmalen erkennen	
Finale-Heft	• Inhalte zusammenfassen	
Klassenarbeit: ZAP-Vorklausur	• Texte analysieren, Sprachanalyse • Argumentativ und informativ zu Texten schreiben	
Zentrale Abschlussprüfungen		
5.	Projektunterricht:	<ul style="list-style-type: none"> • verfügen über erweiterte Strategien und Techniken des Textverstehens (3.3.1) • verwenden beim Schreiben eigener Texte gestalterische Mittel des Erzählens planvoll und differenziert (3.2.2) • beherrschen Verfahren des prozesshaften Schreibens (3.2.1) • verstehen Sachtexte, erkennen das Thema, den Argumentationsgang, die Stilmittel und beziehen Stellung zu den Aussagen (3.3.3) • untersuchen Informationsvermittlung, Wirklichkeitsdarstellung und Meinungsbildung in Texten der Massenmedien, berücksichtigen dabei auch medienkritische Positionen, verfügen über die notwendige Fachterminologie und Methoden zur Untersuchung medial vermittelter Texte (3.3.4/5) • erschließen auf der Grundlage eingeführter fachlichen und methodischen Wissens epischer, dramatischer und lyrische Texte und stellen ihre Ergebnisse in Form eines zusammenhängenden und strukturierten, deutenden Textes dar (3.3.9) • verstehen komplexere, altersstufengemäße literarische Texte und Sachtexte und schätzen deren Wirkungsweisen ein (3.3.6) • setzen erzählerische Formen als Darstellungsmittel bewusst ein (3.1.2)
3 Wochen	• z.B. Überblick über die Literaturepochen erstellen • Gruppenarbeiten und/oder Referate über z. Bsp. Jugendbücher	

